

ԲԱՆԱՍՏԵՂԾ, ՄԱՆԿԱՎԱՐԺ, ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ԳՈՐԾԻՉ

ԼՐԱՑԱՎ ԴԵՎՈՆԴ ԲՐԻՍՏՈՍՏՈՒՐՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80-ԱՄՅԱԿԸ

Ղևոնդ Բրիստոստուրյանը ծնվել է 1935 թվականի հունվարի 20-ին Զալթրում, աշխատավոր գյուղացու ընտանիքում։ Աշակերտական տարիներից սկսել է հորինել բանաստեղծություններ և թղթակցել շրջանային թերթին։ 1954 թ. միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Կորա-կոչվել է և ծառայել Ռազմա-Ծովային նավատորմում։ Աշխատակցել է "Հայրենիքի դրոշմ" թերթին, գրաշար է եղել "Կուտուպով" ռազմական տպարանում։ Ռազմական վերի ջոկատում շրջել է Եվրոպայի ափերը ողողող ծովերում։

Զորացրվելուց հետո 1958-1963 թվականներին սովորել է Շախտի քաղաքի մանկավարժական ինստիտուտի պատմա-բանասիրական ֆակուլտետում։ Ապա գործուղումով երեք տարի որպես ռուսերենի ուսուցիչ աշխատել է Չեչենո-Ինգուշական ԻՍՍՀ-ի գյուղերում։

1967 թվականին վերադարձել է Զալթր և սկսել դասավանդել տեղի դպրոցներում։ Հիմնադրել է Եղիշե Զարենցի անվան գրական խմբակ և

1969 թ. լույս ընծայել "Զալթր" մեքենագիր ավանսիար՝ հայտնի գրող Մ. Անդրիասովի նախաբանով։

Այդ տարիներին արդեն նա ակտիվորեն աշխատակցում էր շրջանային թերթին, որից անբաժան եղավ ավելի քան 40 տարի։ Վարում էր լայն հասարակական գործունեություն։ Եվ պատահական չէ, որ ընտրվել էր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության ընկերության, "Գիտելիք" ընկերության շրջանային կազմակերպությունների պատասխանատու քարտուղար։

Այդ տարիներին Զալթրի 11-րդ դպրոցում նա սկսեց դասավանդել հայոց լեզու և գրականություն։ Ուսուցիչների և աշակերտների հետ միասին լույս ընծայեց "Ոսկե սար" մեքենագիր ավանսիար։

Լայն մտահորիցունի տեր Ղևոնդ Բրիստոստուրյանը գտնվում էր մշտական որոնումների մեջ։ Նա հավաքեց ծավալուն նյութեր իր "Դոնա-հայության պատմության վերաբերյալ ակնարկների" համար, գրեց բազմաթիվ ակնարկներ ու բանաստեղծու-

թյուններ իր հայրենակիցների մասին։

1990-ին նրա հիմնադրած Ռ. Պատկանյանի անվան գրական ստուդիան միավորում էր տեղի բանահավաքներին, բանաստեղծներին, սերտ ստեղծագործական կապեր ուներ մարզի գրողների հետ։ Ստուդիայի անդամների հետ նա ստեղծեց գրական-գեղարվեստական և գավառագիտական "Զալթր-2" ավանսիար։

Բրիստոստուրյանը բոցաշունչ հայրենասեր էր, հայ-ռուսական բարեկամության մեծ շատագով։ Նրա նախաձեռնությամբ անցկացվել են տաղանդավոր գրողներին նվիրված բազմաթիվ երեկոներ, կազմակերպվել հետաքրքիր հանդիպումներ։ Գյուղում կամ շրջանում առանց նրա մասնակցության չէր անցկացվում ոչ մի նշանակալից մշակութային միջոցառում։ Իսկ դրանցից ստացած իր տպավորությունները նա կիսում էր "Զարյա" թերթի ընթերցողների հետ։ Նրա բազմաթիվ ստեղծագործություններ մարզի հայտնի բանաստեղծների թարգմանությամբ տպագրվել են տեղական և միութենական



տարբեր պարբերականներում։

Ղևոնդ Բրիստոստուրյանը գրում էր հիմնականում իր մայրենի հայերենով։ Պատրաստել էր բանաստեղծությունների ու պոեմների երկու ժողովածու։ Բայց չհասցրեց տպագրել։ Ստեղծագործական ուժերի ծաղկուն շրջանում, 1997 թ. նոյեմբերի 19-ին նա կյանքին հրաժեշտ տվեց։ Գրողի փափագը կատարվեց մահվան տարելիցին, երբ ռուսերեն թարգմանությամբ լույս ընծայվեց նրա "Զուռնա" ժողովածուն։

Ռ. ԱՎԱՆԵՍՅԱՆ

**ՄԱՆԿՈՒԹՅԱՆ
ԸՆԿԵՐՈՋՍ**

Ընկեր, ծանոթ աստղեր դառած, Անցաք երկինք, կյանքը թողած, Պապուսիք, ճամփա անցած, Փայլիկեցիք պայծառ, անդարձ։

Խոսք ասացիք, աշխարհ եկած՝ Որպես նվեր մարդկանց թողած, Տաղանդ ու խոսք արդարացրած՝ Հույս-հավատից անդադարձած։

Անպասելի կյանքը թողած՝ Գործով անուն նվիրաբերած, Այժմ պատկեր-կերպար դառած՝ Մեր Զալթրն եք շքեղացրած...

Ա. ՄԱՂԱՅԱՆ

ԷԼԵԳԻԱ

Միտք նվիրում եմ բանաստեղծ ընկերոջս՝ Ղևոնդ Բրիստոստուրյանի (Նաիրյանի) անմոռաց հիշատակին։

Ես այդ երեկոն մոռանա՞մ, ինչպե՞ս... Հեռախոսի վանգ... արագ տագնապով... Տարի է թվում վայրկյանը ասես, Լսափողն եմ ես վերցնում ձեպով։ Սրտի պայթյունից... ախ, չեմ լսում, ո՞վ... Ղևոնդը... չէ, չէ, օ՛, չեմ հավատում...

Հանգիստ չեմ կարող դատել ուղեղով, Թե ինչ է հիմա կատարվում ինձ հետ։ Ինչպես կաջակել երկնքից լալուր Պայթեց իմ գլխին հրով մոլեգին, Այնպես էլ գույժը իմ սրտին անլուր Մեծ ցավ պատճառեց՝ ծանր, տխրագին։

Ասես սենյակում օդը հեղձուցիչ Իմ սիրուն էր վառում... Ես դուրս եմ թռչում, Իսկ դրսում թախծոտ անձրևն է թակում, Իմ երակներում արյունն է սառում...

Մի՞թե երեկ չէր, քեզ հանդիպեցի, Գրկեցի հուզված լանջող վիթխարի, Ուրախությունն հապիվ պալեցի, Ուշքս գերեցիք թո սրտով բարի։ Ասիր,- Մրտաշեւ, պրաղված եմ ես, Իրար կտեսնենք հետո՝ Զալթրում...

... Իսկ այսօր ահա ասում եմ՝ չկաս, Մի՞թե երազ չէ կյանքը աշխարհում։ Ոչ, ոչ... խաբում եմ, խաբում անկասկած, Զեպ տեսնել պառկա՞ծ, այն էլ դագաղո՞ւմ...

... Հնչում է ահա մեղեդին տխուր, Թաղման թափորը առաջ է շարժվում,

Ծփում է մարդկանց հեղեղը փրփուր, Թշվառ սրտերի հառաչն է լսվում... Ծանր է սակայն, օ՛, ծեսը թաղման, Մահից խոսելը թախիժ է բերում...

Պոետի համար չկա գերեզման... Կբայլես մեկ հետ գալիք օրերում... Գնա, միացիք մայր հողին հավետ, Նոր երգեր կասեն, Պոետ քո մասին։

Բ. ՀԱՆՈՐՅԱՆ

ՊՈԵՏԻ ՄԻՐՏԸ

Պաղ ջուր լցրին, ասես, գլխիս, Միրտս կրակով վառվեց, Երբ որ լսեցի ես լուրը՝ Պոետի սիւրը մարեց։

Անժամանակ դու գնացիր, Պոետ Ղևոնդ Նաիրյան, Չեմ հավատում ես քո մահին, Զավակ Դոնի հայություն։

Առյուծի պես ուժով-լույսով, Մի՞թե թաքուն ցավ ունեիր, Հոգիդ լցված վառ հույսերով, Ցավդ պահած՝ կգրեիր։

Բայց թե մահը խոր թաքնված Ամեն մարդու սրտի մեջ, Չի ճանաչում չափ ու սահման, Ոչ էլ տարիք հաստատված։

Էլ չես տեսնի արևի շող, Չորվախի ջուրը համեղ, Բայց մեկ հետ ես, հայոց գրող, Մաքուր հոգով քո անմեղ։

Թող շիրիմիդ վարդեր բացվեն, Թերթիկներն էլ խոսք դառնան, Մարդիկ էլ միշտ քեզ այցի գան Պոեմիդ հետ "Օրթալան"։

Գ. ԲԱԲԻՅԱՆ

ՉԵՄ ՀԱՎԱՏՈՒՄ

Ոգեսարսուռ գույժ տարածվեց, չեմ հավատում,

Զալթրում մի մեծ աստղ հանգեց, չեմ հավատում,

Ջահելաձիք աշուղ չկա՞, չեմ հավատում, Կյանքը այդչա՞փ դաժան եղավ,

չեմ հավատում։

Ոգևորվող, ոգևորող վարպետ խոսքի, Մրտով սիրող, սրտով երգող բլբուլ էր մի, Պատկանյանի, Նալբանդյանի հետևորդ արժան, Մեկ ո՞վ կտա երկրորդ գավառս, ապգի գուսան։

Հայ սրտերում, սաներիդ մեջ հավետ կապրես, Հայաստանի դիվաններում տեղ կբռնես, Ղևոնդ անվամբ գյուղիդ պատում

նվիրեցիր, Հրով անցար, դարձան բազում մեր ցավերին։

Ասին՝ չկա, ո՞նց հավատամ, չեմ հավատում, Եղել ես միշտ, պիտի մնաս իմ հավատում, Խմբակը քո էլ չե՞ս գալու, չեմ հավատում, Լուսեղ հետքով թռար անցա՞ր, չեմ հավատում։

Ա. ՎԱՐԴԿԻՆՅԱՆ

ԴԵՎՈՆԴ ԲՐԻՍՏՈՍՏՈՒՐՅԱՆԻՆ

Գիտեիր կյանքում երջանիկ ապրել Եվ ուրախ սեղան մարդկանց հետ նստել, Զո ընկերներին բարի կամենալ, Նստել մտորել, մտքով հեռանալ։

Դու շառավիղն ես նաիրյան ճյուղի, Բանաստեղծն ես դու մեր Զալթր գյուղի, Ուրախանում էիր քո գրվածքներով, Մեկ համար կարդում դրանք մեծ սիրով։

Դու մեկ թողեցիր քո գիրքը՝ "Զուռնան", Որ հիշատակդ միշտ անմահ դառնա, Այնտեղ քո երգն է հնչում շարունակ, Գիրքը քո, Ղևոնդ, մնաց հիշատակ։

Օ՛, իմ բանաստեղծ, շուտ մեկ թողեցիր, Բայց քո խմբակը չեղավ ցանուցիք, Զո գործն եմք այստեղ

մենք շարունակում, Գրական խմբում քեզ չենք մոռանում։

Ս. ՄՐՄԱՎՈՆՅԱՆ

ՀԱՐԳՈՒՄ ԷՒ ՆՐԱՆ

Չէի եղել նրա հետ մտերիմ, Չէի նստել նրա հետ սեղան, Չէի կտրել նրա հետ կտոր հաց, Բայց հարգում էի նրան։

Երբ եկա գրական ստուդիա Եվ երբ ծանոթացա, Կարծիքիս մնացի հաստատ, Նա մարդ էր իրոք հարգված։

Նա խոսում էր հայերեն, Նա գրում էր հայերեն Եվ իր ամեն մի տողում Հայի ցավից էր խոսում։

Ափսո՛ս, ցավոր, նա չկա Ու մեկ հետ չէ նա այսօր, Նա միշտ հավերժ կմնա Իր գործերով բյուրավոր։

Շ. ՉՈՒՎԱՐՅԱՆ

ԴԵՎՈՆԴ ԵՂԲՈՐՍ

Մեծապատիվ Ղևոնդ եղբայր, Ինչ խոսքերով որ գրեմ, Ապա խոսեմ, ինչպես քո մայր, Սուրբ ճակատդ համբուրեմ։

Որ հայկական լեզուն իսկի Պահպանեցիր անսահման, Հայոց տառերն, ինչպես ոսկի, Զո պրտի մեջ կմնամ։

Դու ստեղծեցիր պոեմներ, Բանաստեղծ մեր հայկական, Կանցնեն օրեր ու տարիներ, Կապրես լեզվով մայրական։

Դու ղեկավար մեր ստուդիայի Ռաֆայելի Պատկանյան, Ջահել ու ծեր որբ թողեցիր Ու հեռացար հավիտյան։

Աստված պահի ժառանգներիդ, Լեզու չունես, որ խոսես, Դու գնում ես սառ գերեզման, Որ մայր հողը համբուրես։

Ա. ՄԵԼԻՔՆՅԱՆ

**ՆԱԻՐՅԱՆԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ**

Ընկեր Նաիրյան, ասում եմ չկաս, Բայց մեր սրտերում հավերժ կմնաս, Գրած տողերդ ջերմ եմ ու բարի, Կհիշենք մեն քեզ միշտ, ամեն տարի։

Կարդացի գրածներդ և հուզվեցի շատ, Ցավալի է, որ ծանոթ չեմ եղել առաջ, Դու մեր սրտերում հավերժ կմնաս, Միրելի բանաստեղծ ես անկասկած..

ՀԵՂԻՆԵԻ ՎԻՇՏԸ

Թախծոտ աչքերը վշտից եմ խոսում, Երբ Ղևոնդին է Հեղինեն հիշում, Հրաշալի ընկեր էր նա իսկապես, Բայց կյանքը մարավ հանգած մոմի պես։

Հեղինեն դարդը դժվար է տանում, Ղևոնդ, քեզ երբեք սրտից չի հանում, Ցավում է հիմա, որ կողքին չկաս, Միայն դու չկաս, չունի բան պակաս։

Ղևոնդ, ճանաչված որպես բանաստեղծ, Միշտ գրում էիր պայծառ ու անկեղծ, Գործեր ամելու շատ ունեիր դեռ, Հեղինեի գլխին թողեցիր մեծ բեռ։